ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1951 *Общественные науки*

Գ. Բաբիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՀՆԳԱՄՅԱԿՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Համկ(բ)Պ 14-րդ համագումարից սկսած մեր երկրում կիրառվող սոցիալիստական ինդուստրացման քաղաքականության նվաճումները հնարավորություն ստեղծեցին ձեռնարկելու ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցմանը և ապահովեցին ՍՍՌՄ-ի սոցիալիստական էկոնոմիկայի լիակատար հաղթանակը՝ ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։ Այդ հիման վրա լիկվիդացվեցին շահագործողական դասակարգերը և այն պատճառները, որոնք ծնում են մարդու շահագործումը մարդու կողմից։

Այդ պատմական խնդիրները սովետական ժողովուրդը լուծեց նախապատերազմյան ստալինյան հնգամյակների տարիներին, որոնք վճռական նշանակություն ունեցան սոցիալիստական հասարակակարգի հաղթանակի համար՝ սովետական ժողովրդի մղած պայքարի տարեգրության մեջ։

Սովետական ժողովրդի մեծ առաջնորդ Ի. Վ. Ստալինը 1946 թ. փետրվարի 9-ին արտասանած իր պատմական ճառի մեջ, խոսելով Սովետական Միության նյութական բազայի և հին Ռուսաստանի նյութական բազայի միջև եղած վիթխարի տարբերության մասին, նշեց, որ «Արտադրության այսպիսի անհարիներթաց աճումը չի կարելի համարել երկրի պարզ ու սովորական զարգացում՝ հետամնացությունից դեպի առաջադիմություն։ Դա թռիչք էր, որի օգնությամբ մեր հայրենիքը հետամնաց երկրից վերածվեց առաջավոր, ագրարայինից՝ ինդուստրիալ երկրի»։[1]

Այնուհետև ընկեր Ստալինը նշում էր, որ սովետական ժողովրդի խաղաղ սոցիալիստական շինարարությունը՝ մինչև Հայրենական Մեծ պատերազմի սկիզբը բաժանվում է երկու շրջանի. վերականգնման շրջան, որը շարունակվում էր մինչև 1928 թվականը և նախապատերազմյան հնգամյակների շրջան, որն ապահովեց մեր հայրենիքի պատմական վերափոխումը՝ հետամնաց երկրից առաջավոր երկրի, ագրարայինից՝ ինդուստրիալ երկրի։

«Այդ պատմական վերափոխությունը,— ասում է ընկեր Ստալինը,— կատարվեց երեք հնգամյակի ընթացքում, սկսած 1928 թվից՝ առաջին հնգամյակի առաջին տարուց։ Մինչև այդ ժամանակ մենք հարկադրված էինք զբաղվել ավերված արդյունաբերության վերականգնմամբ և առաջին համաշխարհային պատերազմի ու քաղաքացիական պատերազմի հետևանքով ստացած վերքերի բուժմամբ։ Եթե դրա հետ միասին նկատի առնենք այն հանգամանքը, որ առաջին հնգամյակը կատարվեց չորս տարվա ընթացքում, իսկ երրորդ հնգամյակի իրագործումը պատերազմն ընդհատեց նրա կատարման չորրորդ տարում, ապա դուրս է գալիս, որ մեր երկիրը ագրարայինից ինդուստրիալ դարձնելու համար հարկավոր եղավ ընդամենը 13 տարի»։[2]

[1] *Ի. Վ. Ստալին, Ճառ Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1946թ. փետրվարի 9-ին։ Հայպետհրատ, 1946թ., էջ 14։*
[2] *Նույն տեղում, էջ 14—15։*

Նախապատերազմյան ստալինյան հնգամյակների մեծագույն պատմական նշանակությունը կայանում է հենց նրանում, որ նրանք ստեղծեցին մեր երկրի պաշտպանության համար հզոր տնտեսական բազա, որը և հնարավորություն տվեց գլխովին ջախջախելու Սովետական Միության ամենաոխերիմ թշնամիներին Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։

Բոլշևիկյան պարտիան և Սովետական կառավարությունը, սովետական ժողովրդի իմաստուն առաջնորդ Ի. Վ. Սաալինի նախաձեռնությամբ հնգամյակները մշակելիս սովետական ժողովրդին առաջադրեցին քաղաքական և տնտեսական կոնկրետ խնդիրներ, որոնք կանգնած էին մեր երկրի առաջ սոցիալիստական շինարարության տվյալ էտապում։ Պարտիան և կառավարությունը մոբիլիզացրին մեր ժողովրդի ուժերը՝ այդ խնդիրները լուծելու ուղղությամբ, անողոք պայքար մղեցին դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի դեմ և ապահովեցին սոցիալիզմի հաղթանակը ՍՍՌՄ-ում։

Իրագործելով մեր երկրի սոցիալ-տնտեսական վերափոխման մեծագույն խնդիրները, սովետական ժողովուրդը սստալինյան առաջին հնգամյակի տարիներին (1928—1932 թթ.) կառուցեց սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը, ջախջախեց կապիտալիստական վերջին դասակարգը՝ կուլակությունը, որի հետևանքով ՍՍՌՄ-ը վերջնականապես կանգնեց սոցիալիստական զարգացման ուղու վրա։

Երկրորդ հնգամյակի (1933—1937 թթ.) հաջող իրագործման հետևանքով մեր երկրում վերջնականապես լիկվիդացվեցին բոլոր շահագործող դասակարգերը, լրիվ կերպով ոչնչացվեցին այն պատճառները, որոնք ծնում էին մարդու շահագործումը մարդու կողմից և հանգեցնում հասարակության բաժանմանը շահագործողների և շահագործվողների։

Այդ մեծագույն պատմական նվաճումները հնարավորություն տվին ՍՍՌՄ-ին թևակոխել կոմունիզմի առաջին փուլը՝ սոցիալիզմը։

Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՌՄ-ում ապահովեց սովետական հասարակակարգի աննախընթաց քաղաքական-բարոյական միասնությունը։

Առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին մեր երկրում տեղի ունեցած արմատական սոցիալական ու տնտեսական փոփոխությունները իրենց օրենսդրական արտահայտությունը գտան Ստալինյան Կոնստիտուցիայի մեջ, որն ընդունվեց Սովետների VIII արտակարգ համագումարում 1936 թ. դեկտեմբերի 5-ին։

Սոցիալիզմի հաղթանակների հիման վրա երրորդ հնգամյակում ՍՍՌՄ-ը թևակոխեց զարգացման մի նոր շրջան՝ սոցիալիստական անդասակարգ հասարակության կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար դեպի կոմունիզմ անցնելու շրջանը։

Սովետական ժողովուրդը ձեռնարկեց այն գլխավոր խնդրի լուծմանը, որն առաջադրեց մեր երկրին ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Պ 18-րդ համագումարում՝ հասնել և անցնել առավել զարգացած կապիտալիստական երկրներին նաև տնտեսապես, այսինքն արտադրվող մթերքների քանակով ըստ բնակչության յուրաքանչյուր շնչի։ Բայց հիտլերյան զավթիչների հարձակումը ընդհատեց մեր ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքը։

* * *

Սովետական Հայաստանը՝ մեր հզոր սոցիալիստական Հայրենիքի մի բաղկացուցիչ մասը, մեր ողջ երկրի հետ միասին, նախապատերազմյան ստալինյան հնգամյակների տարիներին ձեռք բերեց հոյակապ հաղթանակներ։

Ռեսպուբլիկայի աշխատավորությունը, ինչպես և ՍՍՌՄ-ի բոլոր ժողովուրդները, ոգեշնչված մեր երկրում սոցիալիստական հասարակակարգ կառուցելու գաղափարով, կոմունիստական պարտիայի գլխավորությամբ հերոսական պայքար ծավալեց ստալինյան իմաստուն նախագծումների կենսագործման, ստալինյան հնգամյակները ժամկետից շուտ կատարելու համար։

Ստալինյան հնգամյակներում փայլուն կերպով մարմնավորվեց բոլշևիկների պարտիայի և Սովետական կառավարության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը, նախկինում հետամնաց շրջանների և ազգությունների տնտեսական և կուլտուրական առավել արագ զարգացումն ապահովելու քաղաքականությունը։

Ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպություններն աշխատավորության մեջ ծավալեցին կազմակերպական և ագիտացիոն-պրոպագանդիստական լայն աշխատանք, խթանելով աշխատավորների ստեղծագործական նախաձեռնությանը։ Նրանք գլխավորեցին սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը, որոնք ապահովեցին ստալինյան հնգամյակների կատարումն ու գերակատարումը։

Երկրի բնական և տնտեսական հարուստ ռեսուրսների լայն օգտագործման հիման վրա, բոլշևիկյան պարտիայի և Սովետական կառավարության ամենօրյա հոգատարության շնորհիվ արագ տեմպերով զարգացան Սովետական Հայաստանի արտադրողական ուժերը։

Ռեսպուբլիկայի ինդուստրիալ զարգացման հիմքը հանդիսացան երկրի ջրա-էներգետիկ ռեսուրսները, որոնք հնարավորություն ստեղծեցին լայնորեն ծավալելու հիդրոէլեկտրակայանների կառուցումը և ստանալու մեծ քանակությամբ էժանագին էլեկտրոէներգիա։

Տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկրի ողջ ջրա-էներգետիկ ռեսուրսների օգտագործման դեպքում էլեկտրոէներգիայի յուրաքանչյուր տարվա արտադրանքը կարելի է հասցնել մինչև միքանի միլիարդ կիլովատ ժամի։

Մեր երկրի էլեկտրիֆիկացման լենինյան-ստալինյան պլանին համաձայն, Հայկական ՍՍՌ-ում, սկսած 1923 թվականից, լայնորեն ծավալվեց հետազոտական աշխատանքը, իսկ դրանից անմիջապես հետո՝ սկսվեց խոշորագույն հիդրոէլեկտրակայանների կառուցումը։

Ռեսպուբլիկայի ամենախոշոր ջրա-էներգետիկ սիստեմը հանդիսացավ Սևան—Զանգու—Արաքս սիստեմը։

Երկար տարիների գիտա-հետազոտական աշխատանքները ցույց տվեցին, որ Սևանա լճի ջրի պաշարը հասնում է մոտ 60 միլիարդ խորանարդ մետրի և աննպատակ վատնվում է։

Գիտնականները ճշգրտորեն հաստատեցին, որ տարվա ընթացքում Սևանա լիճն է թափվում 1322 միլիոն խորանարդ մետր ջուր ի հաշիվ տեղումների և բազմաթիվ վտակների։ Մինչդեռ Զանգու գետը, որ լճից ելնող միակ գետն

է, տարեկան վերցնում է ընդամենը 60 միլիոն խորանարդ մետր ջուր. բացի այդ՝ ստորերկրյա ակունքները վերցնում են ևս 60 միլիոն խորանարդ մետր, իսկ ջրի մնացած քանակը— մոտ 1200 միլիոն խորանարդ մետր, կամ լիճը թափվող ամբողջ ջրի 90 տոկոսը գոլորշիանում է լճի մակերեսից, երկրին չտալով ոչ մի օգուտ։ Սովետական գիտնականների կողմից մշակված՝ Սևանա լճի ջրերի կոմպլեքսային օգտագործման ծրագրի կենսագործումով հնարավոր կլինի այդ ջուրը հատուկ ջրհան ստորգետնյա թունելի միջոցով լճից արհեստական կերպով դուրս թողնելով, խիստ չափով կրճատել նրա հայելին և ապահովել լիճը թափվող ջրային ռեսուրսների օգտագործումը։

Մյուս կողմից՝ մի քանի անգամ ավելանում է Հանգվի ջրային ռեսուրսները։

Սևան—Զանգու կասկադի պլանը նախատեսնում է օգտագործել Զանգու գետի համարյա հազար մետր բարձրությունից գահավիժումը, նրա տարբեր աստիճանների վրա կառուցել մի քանի հիդրոէլեկտրակայան, որոնց հզորությունը կհասնի տասնյակ հազար կիլովատ ժամ ընդհանուր կարողության[1]։

Սևանա լճից դուրս եկող ջրի ավելացումը 50—60 տարվա ընթացքում 50 մետրով կիջեցնի նրա մակերևույթը, որի հետևանքով լճի հայելին (մակերեսը) 7 անգամ կկրճատվի։ Խիստ չափով կկրճատվի նաև լճի մեջ թափվող ջրային ռեսուրսների գոլորշիացումը և հենց դրանով հնարավոր կդառնա ջրային այդ հարուստ պաշարները օգտագործել Հայաստանի տնտեսության և կուլտուրայի ծաղկման համար։

Լճի հայելու կրճատումով ամբողջապես կցամաքի մեծ Սևանը, իսկ ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությունը կստանա լրացուցիչ 100 հազ. հեկտար նոր, ստորջրյա հող, որը կօգտագործվի սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար։

Կասկադի հիդրոէլեկտրակայաններում օգտագործված Սևանի ջրերը հատուկ դերիվացիոն ջրանցքներով կգնան Արարատյան դաշտավայրի 200 հազ. հեկտարից ավելի անջրդի հողերը ոռոգելու։ Այդ հողերի վրա կստեղծվեն նոր սոցիալիստական բանվորական ավաններ, կոլխոզներ և սովխոզներ։ Ջուր ստանալով՝ նրանք կդառնան Սովետական Հայաստանի ծաղկուն բնակավայրերը։

Էներգետիկ շինարարության հսկայական պլանի հետ կապված գիտատեխնիկական և տնտեսական պրոբլեմների մշակմանը զուգընթաց ծավալվեցին նաև այդ պլանով նախատեսված էլեկտրակայանների ու հիդրոտեխնիկական օբեկտների կառուցումները։

Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանից (I Երգէս) և Լենինականի հիդրոէլեկտրակայանից հետո, որոնք կառուցվեցին և շահագործման հանձնըվեցին ստալինյան հնգամյակներից առաջ, ստալինյան հնգամյակների տարիներին կառուցվեցին և շահագործման հանձնվեցին մի շարք խոշոր հիդրոկայաններ, որոնք հզոր էներգետիկ բազա հանդիսացան ռեսպուբլիկայում բուռն թափով զարգացող արդյունաբերության համար։

1928 թվականին սկսվեց Ձորագէսի կառուցումը, որը շահագործման հանձնվեց 1933 թվին։ 1930 թ. սկսվեց ՍՍՌՄ-ում առաջին ավտոմատիկ կահավորման՝ Երևանի II հիդրոկայանի կառուցումը, որն ավարտվեց 1932 թվին։

[1] Տես Մ. Մ. Լ ե ր բ ե դ և, Սևանի պրոբլեմը, Երևան, 1946 թ.։

1936 թվականին գործարկվեցին Հայաստանում գործող հիդրոկայաններից ամենամեծ հիդրոկայանի՝ Քանաքեռգէսի առաջին գեներատորները։ Այդ հիդրոկայանի կառուցումը սկսվել էր դեռ 1931 թվին։

Երրորդ հնգամյակի սկզբներին Հայաստանի աշխատավորները էներգետիկ արդյունաբերության ևս երկու խոշոր կառուցումների հիմքը դրին Սևանի ափին՝ Սևանա ստորերկրյա հիդրոկայանի և ջրհան կառուցվածքի։ 1940 թվականին Քանաքեռգէսի հինգերորդ ագրեգատը ևս շահագործման հանձնվեց և, այդպիսով, հիդրոկայանն սկսեց աշխատել լրիվ կարողությամբ։

Բացի հիշատակված խոշոր հիդրոկայաններից, ստալինյան հնգամյակների տարիներին կառուցվեցին նաև երկու տասնյակից ավելի գյուղական հիդրոկայաններ՝ կոլտնտեսությունների, գյուղերի և շրջանային կենտրոնների կարիքները բավարարելու համար։

Նոր հիդրոկայանների կառուցումով տարեց տարի աճում էր ռեսպուբլիկայի արդյունաբերության էներգետիկ բազան։ Այսպես, օրինակ, նախորդ տարիների համեմատությամբ Հայաստանի էլեկտրակայանների կարողությունը 1932 թ. աճեց մինչև 426 տոկոսով, 1937 թվին— 1536 տոկոսով, իսկ 1940 թվականին նա ավելացավ էլ ավելի մեծ տոկոսով։

Եթե ռեսպուբլիկայի էլեկտրակայաններում 1932 թ. նախորդող տարիներում արտադրվող էլեկտրոէներգիայի քանակն ընդունենք որպես 100, ապա 1932 թվին նա կազմում էր 260 տոկոս, 1937 թվին— 1263 տոկոս, իսկ 1940 թվին Հայաստանում արտադրվում էր 19,7 անգամ ավելի էլեկտրոէներգիա, քան 1927—28 թթ.։ Էներգետիկ շինարարության բնագավառում ռեսպուբլիկայի խոշորագույն նվաճումներից մեկը հանդիսացավ Հայաստանում գործող ռայոնական նշանակություն ունեցող բոլոր հիդրոկայանների խմբավորումը։ Հաղորդման բարձրավոլտ գծերը 600 կիլոմետրից ավելի երկարությամբ (1940 թ.) միացրին ռեսպուբլիկայի զանազան մասերում գտնվող խոշոր հիդրոկայանները մի խմբավորման մեջ, որը հնարավորություն տվեց էներգիայի հաղորդման կարգավորման ճանապարհով ապահովել արդյունաբերական ձեռնարկությունների նորմալ աշխատանքը։[1]

Ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում հիդրոէներգետիկ կառուցումների համար ծախսված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում է մոտ 250 միլիոն ռուբլի։

Չնայած էներգետիկ տնտեսության զարգացման այդքան արագ տեմպերին, այնուամենայնիվ 1940 թվականին օգտագործված էին ռեսպուբլիկայի բոլոր ջրա-էներգետիկ ռեսուրսների միայն 10 տոկոսը։ Այդ պատճառով էլ հիդրոէներգետիկ կառուցումների հետագա ծավալումը շարունակում էր մնալ ռեսպուբլիկայի պարտիական և սովետական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, որպես ժողովրդական տնտեսության գլխավոր խնդիրներից մեկը։

Էներգետիկ տնտեսության զարգացման արագ տեմպերը, արդյունաբերության հումքային բազայի աճն ու զարգացումը ապահովեցին ոչ միայն ար-

[1] Հաշվումները մենք կատարել ենք Հայաստանի Պետպլանի նյութերի հրման վրա, հետագայում եթե աղբյուրները չեն ցույց տրվում, նշանակում է տվյալները բերվում են ըստ Հայաստանի Պետպլանի և վիճակագրական վարչության նյութերի։

դյունաբերության գոյություն ունեցող ճյուղերի՝ պղնձա-հանքային, տեքստիլ, թեթև և սննդի արդյունաբերության լրիվ վերակառուցումն ու բուռն աճը, այլ և պայմանավորեցին ծանր ինդուստրիայի այնպիսի նոր ճյուղերի առաջ գալն ու արագ զարգացումը, ինչպիսիք են քիմիական, մեքենաշինական, գունավոր մետալուրգիան և շինանյութերի արդյունաբերությունը։

Էժան և տարեց տարի աճող էլեկտրոէներգետիկ տնտեսության առկայությունը մեկ կողմից, հարուստ բնական հումքային ռեսուրսները մյուս կողմից, հնարավորություն տվեցին Սովետական պետությանը ստեղծել ռեսպուբլիկայում առաջնակարգ քիմիական արդյունաբերություն։ Հայաստանի քիմիական արդյունաբերության հիմնական հումքային բազան հանդիսացան կրաքարերի անսպառ պաշարները։

Քիմիական արդյունաբերության զարգացման համար օգտագործվեցին նաև ռեսպուբլիկայի պղնձի արդյունաբերության ավելցուկները։

Ռեսպուբլիկայում քիմիական արդյունաբերությունը արագ թափով սկսեց զարգանալ առանձնապես երկրորդ հնգամյակի սկզբներից։ 1933 թվականին շահագործման հանձնվեց Կիրովականի քիմիական գործարանի առաջին հերթը։ Այդ նույն տարում կառավարության որոշմամբ սկսվեց կառուցվել ռեսպուբլիկայում ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունը՝ Ս. Մ. Կիրովի անվան գործարանը, որը գործող ձեռնարկությունների շարքն անցավ 1939 թվի վերջերին։ 1933—40 թթ. ընթացքում զգալիորեն ընդարձակվեց Կիրովականի քիմիական գործարանը։ Կարբիդի արդյունաբերությամբ Հայաստանը առաջին տեղը բռնեց Սովետական Միության մեջ։ Ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերությունն սկսեց երկրին տալ մեծ քանակությամբ քիմիական կարևոր արտադրանք, որն օգտագործվում է Սովետական Միության ժողովրդական տնտեսության կարիքների համար։

Հայաստանի արդյունաբերության ոչ մի ճյուղը չի զարգացել այնպիսի արագ տեմպերով, ինչպես քիմիական արդյունաբերության ճյուղը։ Բավական է նշել, որ նրա արտադրանքը 1932-ից մինչև 1940 թվականը աճել է 32 անգամ։

Չնայած այդ բուռն աճին, Հայաստանի քիմիական արդյունաբերությունը ստալինյան հնգամյակների տարիներին լրիվ չափով չէր սպառել իր հետագա բուռն զարգացման հնարավորությունները։

Ստալինյան հնգամյակների տարիներին հնարավորություն ստեղծվեց լրիվ չափով վերակառուցման ենթարկել ռեսպուբլիկայի ծանր ինդուստրիայի կարևորագույն ճյուղերից մեկը՝ պղնձի արդյունաբերությունը։

Նոր ֆլոտացիոն գործարանի և արտացոլող վառարանի կառուցումը, ինչպես նաև հանքանյութի հանույթի և փոխադրման մեքենայացումը խթանեցին պղնձի արդյունաբերության հետագա զարգացմանը։ 1932—1940 թթ. շրջանում պղնձի հալույթն ավելացավ 2,2 անգամով։ Պղնձարդյունաբերության զարգացմանն էլ ավելի մեծ թափ հաղորդելու համար ծավալվեցին երկրաբանական հետախուզական խոշոր աշխատանքներ, որը հնարավորություն տվեց զգալիորեն ավելացնել պղնձահանքի արդյունաբերական պաշարները։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման և առանձնապես պղնձարդյունաբերության զարգացման համար խոշոր նշանակություն ունեցավ աշխատանքի ստախանովական մեթոդների կիրառումը, մասնավորա-

պես, մեր երկրի նշանավոր հորատողներ, բազմահանքային ընկ. ընկ. Սեմիվոլոսի և Յանկինի մեթոդը։

Առաջին անգամ այդ մեթոդը Հայաստանում գործադրեցին Շամլուղի ստախանովական հորատողներ Հովսեփ Մամյանը և Արիստիդ Բուգագովը, կիրառելով ձեռքի հորատիչ մեքենայով (պերֆորատոր) հորատման բազմահանք ձևը, նրանք մեկ հերթափոխի ընթացքում հորատեցին 12—14 անցք և կատարեցին 6—7 նորմա։

Այդ շարժման մեջ մտան նաև Ղափանի հանքերի ստախանովականները։ 1940 թվի հոկտեմբերի 28-ին Ղափանի կոմբինատի Կոմսոմոլի անվան հանքահորի հանքափոր Լ. Ստեփանյանը սահմանեց պղնձահանքի հանման տամամիութենական ռեկորդ, օրվա նորման մի հերթափոխի ընթացքում կատարելով 5652 տոկոսով։[1] Ստախանովական-բազմահանք հորատողների թիվն աճում էր օրը օրին։

Աշխատանքի ստախանովական մեթոդների կիրառումը լիկվիդացրեց պղնձահանքի հանույթի հետամնացությունը և այդ ձևով ապահովեց պղնձարդյունաբերության զարգացումը ռեսպուբլիկայում, պղնձի հանույթի պլանների սիստեմատիկ կատարումը Ալավերդու պղնձաձուլական գործարանում։

Երրորդ հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում նախապատրաստական լայն աշխատանք կատարվեց գունավոր մետալուրգիայի մի շարք նոր ձեռնարկություններ ստեղծելու ուղղությամբ։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության ամենաերիտասարդ ճյուղը հանդիսացավ մեքենաշինական արդյունաբերությունը։ Ստալինյան հնգամյակների առաջին տարիներին նա մշակում էր արտադրական պարզ գործիքներ, առավելապես գյուղատնտեսական կարիքների համար։

Ռեսպուբլիկայի մետաղամշակման արդյունաբերության առաջնեկը՝ Ջերժինսկու անվան գործարանը հնգամյակի տարիներին ամբողջապես վերակառուցվեց նորագույն տեխնիկայի հիման վրա։ Պարզ գործիքների փոխարեն նա սկսեց արտադրել մետաղակտրիչ դազգահներ, հիմք դնելով ռեսպուբլիկայի մեքենաշինական արդյունաբերության։ Երրորդ հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում սկսվեց մի շարք խոշոր մեքենաշինական գործարանների կառուցումը, որոնք գործող ձեռնարկությունների շարքն անցան արդեն Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։

Մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության զարգացման հետ միասին ավելացավ և նրա արտադրանքը։ 1932—1940 թթ. նրա համախառն արտադրանքը աճեց 4,3 անգամ։ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին և առանձնապես հետպատերազմյան հնգամյակի տարիներին մեքենաշինական արդյունաբերությունը դարձավ Հայաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը։

Ռեսպուբլիկայում եղած հարուստ բնական ռեսուրսների՝ տուֆի, գրանիտի, բազալտի, պեմզայի, կրաքարի և այլ շինանյութերի հիման վրա ստեղծվեց և արագ թափով զարգացավ շինանյութերի արդյունաբերությունը, որը լայնորեն ծավալված կապիտալ շինարարությունն ապահովեց տեղական շինանյութով։

Ռեսպուբլիկայի շինանյութերի արդյունաբերության մեջ առանձին տեղ

[1] Տես «Սովետական Հայաստան», 1940 թ., դեկտեմբերի 30-ը։

գրավեց տուֆ քարի արտադրությունը, մասնավորապես Արթիկի տուֆի արտադրությունը, որի արդյունաբերական շահագործումը սկսվեց 1929 թվից։

Իր բարձր որակի և մշակության հեշտության շնորհիվ Արթիկի տուֆը տարեց տարի ավելի լայն չափով սկսեց կիրառվել շինարարության մեջ ոչ միայն ռեսպուբլիկայում, այլև նրա սահմաններից շատ հեռու։ Տուֆի հանույթը Արթիկի հանքերում տարեց տարի ավելանում էր։ 1940 թվին նա կազմում էր ավելի քան 100 հազար խորանարդ մետր։

1932 թվին Արարատի կրաքարերի հիման վրա կառուցվեց և շահագործման հանձնվեց Արարատի ցեմենտի գործարանը, որը յուրաքանչյուր տարի արտադրում է մի քանի տասնյակ հազար տոննա պորտլանդ-ցեմենտ։ Կառուցվել և շահագործման են հանձնվել նաև մի շարք այլ գործարաններ՝ ալյուսի, կղմինդրի, կրի, պեմզաբլոկների և այլն։ Կազմակերպվել է մարմարի հանույթը և այլ շինանյութերի արտադրությունը։

Ծանր ինդուստրիայի զարգացմանը զուգընթաց՝ բուռն թափով աճեց նաև մշակող արդյունաբերությունը, մասնավորապես՝ տեքստիլի, տրիկոտաժի, կարի, կաշվեկոշկեղենի, պահածոների, գինու և կոնյակի, մսի և կաթի, ալրի և այլ արդյունաբերական ճյուղերը։

Սոցիալիստական դյուղատնտեսության զարգացումը, առանձնապես այնպիսի ճյուղերի, ինչպես բամբակագործությունը, ծխախոտագործությունը, խաղողագործությունը, այգեգործությունն ու անասնապահությունը ավելի ու ավելի էին ընդարձակում Սովետական Հայաստանի օր ավուր աճող արդյունաբերության հումքային բազան։

Մինչև սովետական իշխանության հաստատումը՝ Հայաստանում կային մշակող արդյունաբերության զանազան մանր ձեռնարկություններ, որոնք իրենց բացառիկ հետամնացության հետևանքով չկին կարող ծառայել որպես բազա արդյունաբերության այդ ճյուղերի վերակառուցման համար։ Սովետական իշխանությունը միանգամայն նորից ստեղծեց առաջավոր տեխնիկայով հագեցած, ժամանակակից վերամշակման արդյունաբերություն։

Լենինական քաղաքում 1924—25 թթ. կառուցված փոքրիկ տեքստիլ գործարանի բազայի վրա ստեղծվեց հզոր տեքստիլ արդյունաբերություն։ Երբեմնի հետամնաց և խուլ փոքրիկ քաղաքը դարձավ Անդրկովկասի տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոններից մեկը։ Այստեղ կառուցվել են տեքստիլ կոմբինատ, Մանարան, Տրիկոտաժ և Գուլպայի գործարաններ։ 1940 թվին այնտեղ արդեն աշխատում էին ավելի քան 5 հազար բանվոր ու բանվորուհիներ։

Տեքստիլ և տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններ ստեղծվել են նաև Հայաստանի մի շարք այլ շրջաններում։ Տեքստիլ և տրիկոտաժ արդյունաբերության բուռն աճի մասին է վկայում նրանց արտադրանքի անընդհատ ավելացումը։ 1928 թվականին արտադրվել է ընդամենը 2,2 միլիոն մետր բամբակեղեն գործվածք, իսկ 1940 թվին 27 միլիոն մետր, այսինքն 12 անգամ ավելի։ 1940 թ. արտադրվել է 10 միլիոն զույգ գուլպա, այսինքն երկու անգամ ավելի, քան 1932 թվին։

Արագորեն զարգացան նաև թեթև արդյունաբերության մյուս ճյուղերը։ 1940 թ. վերջին ռեսպուբլիկայի թեթև արդյունաբերության սիստեմում գտնվում էին— 3 կոշիկի գործարան՝ տարեկան մոտ 2 միլիոն զույգ կոշիկի արտադրությամբ, 3 կարի գործարան՝ մոտ 28 միլիոն ռուբլու գումարի արտա-

դրանքով, կաշվի գործարան, որը 1940 թ. մշակում էր 47 հազ. քառ. մետր խրոմային կաշի և 270 տոննն կոշտ կաշի, կաշվեգալանտերիայի գործարանը և մի շարք այլ, համեմատաբար ավելի փոքր ձեռնարկություններ։

Արմատական փոփոխություններ կատարվեցին նաև սննդարդյունաբերության բնագավառում։

Կապիտալիստ Շուստովին պատկանող նախկին փոքրիկ գինու-կոնյակի գործարանը հիմնովին վերակառուցվեց, զգալիորեն ընդարձակվեց և սարքավորվեց նոր տեխնիկայով։ Ռեսպուբլիկայում կառուցվեցին գինու-կոնյակի «Արարատ» տրեստի նոր գործարանները, որի հետևանքով ավելացավ խաղողի գինիների արտադրանքը։ Այսպես, օրինակ, 1940 թ. արտադրվել է 105 հազար հեկտոլիտր խաղողի գինի՝ 1928 թվին արտադրված 15,8 հազար հեկտոլիտրի դիմաց։

Ստեղծվեց նոր, առաջնակարգ տեխնիկայով սարքավորված պահածոների արդյունաբերություն։ Երևան քաղաքում կառուցվեց պահածոյի խոշոր գործարան և մի քանի փոքր գործարաններ կառուցվեցին շրջաններում։

Ստալինյան հնգամյակների տարիներին պահածոյի արդյունաբերության արտադրանքն աճեց ավելի քան 12 անգամով, այսինքն 1927—28 թթ. 1,1 միլիոն պայմանական տուփի փոխարեն 1940 թվին պահածոների արտադրանքը հասավ մինչև 14 միլիոն պայմանական տուփի։

Հիմնականում ստալինյան հնգամյակների տարիներին կառուցվեցին մթնոլորտ, կաթ և անասնապահական այլ մթերքներ մշակող բազմաթիվ ձեռնարկություններ։ 1935 թվին Լենինական քաղաքում սկսեց աշխատել Անդրկովկասի խոշորագույն մսի կոմբինատներից մեկը, ավելի վաղ՝ 1929 թվին, Երևանում կառուցվեց սառցարան, 1930 թվին կառուցվեց կաթնագործարան։ Հայաստանի շրջաններում կառուցվեցին երկու տասնյակից ավելի պանրագործական և յուղագործական գործարաններ։ Դրա հետևանքով Հայաստանը դարձավ բարձրորակ պանիրներ՝ «Շվեցարական», «Ռոկֆոր» արտադրող կարևորագույն շրջաններից մեկը։ Յուղագործական և պանրագործական արդյունաբերության աճի մասին են վկայում հետևյալ տվյալները. 1932 թվից մինչև 1940 թ. շրջանում պանրի արտադրանքն ավելացավ ավելի քան 20 տոկոսով, իսկ կենդանական յուղի արտադրանքը բարձրացավ էլ ավելի մեծ չափերով։

Ռեսպուբլիկայում կառուցվեցին հացի, մակարոնի և կարամելի գործարանները, 1932 թվին շահագործման հանձնվեց ալրաղաց խոշոր կոմբինատը։ Անընդհատ մեծանում էր նաև ծխախոտի, օճառի, ձեթի և սննդարդյունաբերության այլ ճյուղերի արտադրանքը։ 1944 թվին ռեսպուբլիկայի սննդարդյունաբերության համախառն արտադրանքի արժեքը նախորդ տարիների համեմատությամբ աճեց 4 անգամ։

Կատարելով ընկեր Ստալինի ցուցումները, Սովետական Հայաստանի պարտիական և սովետական կազմակերպությունները մեծ ուշադրություն էին դարձնում տեղական արդյունաբերության զարգացմանը և լայն սպառման առարկաների արտադրության ընդարձակմանը՝ տեղական հումքի և արդյունաբերության ավելցուկների բազայի վրա։ Այդ բնագավառում առավել նշանակալից քեկում առաջացավ 1939 թ.։ Միմիայն Տեղական արդյունաբերության մինիստրության գծով լայն սպառման ապրանքների արտադրությունը 1939 թ. ավելացավ նախորդ տարիների համեմատությամբ 55 տոկոսով։ Մեծ չափով

ավելացավ լայն սպառման ապրանքների արտադրությունը նաև տնայնագործական կոոպերացիայի գծով։

* *

Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացման տեմպերը նախապատերազմյան ստալինյան հնգամյակների տարիներին զգալիորեն գերազանցում էին ՍՍՌՄ-ի արդյունաբերության աճման միջին տեմպերին։

Այն ժամանակ, երբ Սովետական Միությունում ստալինյան առաջին հնգամյակի տարիներին արդյունաբերական արտադրանքի աճման միջին-տարեկան տեմպերը կազմում էին 22 տոկոս, Հայաստանում կազմում էին 58 տոկոս։ Եթե երկրորդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի աճման միջին-տարեկան տեմպերը ՍՍՌՄ-ում կազմում էին 17 տոկոս, ապա Հայաստանում այդ նույն ժամանակաշրջանում մենք ունեինք արդյունաբերական արտադրանքի 26 տոկոս միջին տարեկան աճ։ Իսկ երրորդ հնգամյակի երեք տարիների ընթացքում աճման այդ տեմպը ՍՍՌՄ-ում կազմում էր 13 տոկոս, Հայաստանում մոտ 23 տոկոս։

Եթե ստալինյան հնգամյակների 13 տարվա ընթացքում Սովետական Միության արդյունաբերական արտադրանքը աճեց 6,5 անգամով, ապա Սովետական Հայաստանի արդյունաբերական արտադրանքը նույն տարիներին աճեց 15 անգամ։

Հայաստանի արդյունաբերության զարգացման այդ համեմատաբար ավելի բարձր տեմպի մեջ իր վառ արտահայտությունն է գտել բոլշևիկյան պարտիայի և Սովետական պետության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության գործնական կիրառումը։

ՍՍՌՄ-ի բուռն թափով աճող արդյունաբերությունը, նրա հաջող վերակառուցումը նոր տեխնիկայի հիման վրա, տնտեսվարների առաջ խնդիր դրեցին՝ արմատապես վերափոխել արտադրության ղեկավարման մեթոդները և ապահովել նոր տեխնիկայի յուրացումը, որպեսզի ապահովվի արտադրական պլանների կատարումն ու գերակատարումը։

Այդ խնդիրների լուծման համար հսկայական նշանակություն ունեցավ ընկեր Ստալինի պատմական ելույթը տնտեսվարների խորհրդակցությունում 1931 թվի հունիսի 23-ին։

Իր ելույթում ընկեր Ստալինը մշակեց սոցիալիստական ինդուստրիայի ղեկավարման բոլշևիկյան սկզբունքները։

Ռեսպուբլիկայի պարտիական և տնտեսական կազմակերպությունները, անշեղորեն կենսագործելով ընկեր Ստալինի ցուցումները, աշխատում էին բարելավել արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը, յուրացնել նոր տեխնիկան և աճեցնել արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի երիտասարդ կադրեր։

Ընկեր Ստալինի հանճարեղ ցուցումների կենսագործումը սոցիալիստական արդյունաբերության նոր, հզոր վերելքի սկիզբ դրեց։ Տեխնիկան յուրացրած բանվորները փշրում էին հին տեխնիկական նորմաները և աշխատանքային աննախընթաց սխրագործություններ կատարում։ Ծավալվեց ստախանովական շարժումը, որը սոցիալիստական մրցությունը բարձրացրեց մի նոր, ավելի բարձր աստիճանի։ Ստախանովյան շարժումն արտադրական

խանդավառության նոր ալիք առաջացրեց Սովետական Հայաստանի բանվորների և ամբողջ աշխատավորության միջև։

Հայաստանում ստախանովյան մեթոդների առաջին կիրառողներից մեկը հանդիսացավ Ղափանի պղնձի կոմբինատի հորատող Միսակ Պապյանը, որը սկսեց կատարել 4—5 նորմա։ Ալավերդու պղնձի կոմբինատի առաջին ստախանովականներից եղավ հորատող Ս. Խաչատրյանը, որը սիստեմատիկորեն կատարում էր 3—4 նորմա։

Հայաստանի երկաթուղային տրանսպորտում Սովետական Միության առաջավոր մեքենավար Վրիվոնոսի ստախանովական փորձը կիրառեցին արագընթաց մեքենավարներ Ա. Ղարիբյանը, Ա. Պողոսյանը, Բ. Շիգանյանը, Գ. Աբաջյանը, Ա. Խաչատրյանը և ուրիշներ։

Լենինականի շոգեքարշային դեպոյի վերանորոգման բրիգադալ բրիգադավար ընկ. Ա. Զուփիկյանը աշխատանքի բարձր ցուցանիշներ տվեց, նա 6 ժամում 250 դետալ վերանորոգեց, որի կատարման համար նախատեսված էր 72 ժամ։ Աշխատանքի այդպիսի ցուցանիշներ նա տալիս էր սիստեմատիկաբար։

Ջերժինսկու անվան մեքենաշինական գործարանում աշխատանքի ստախանովյան մեթոդը առաջինը կիրառեց որակավոր հին բանվոր խառատ ընկ. Ա. Մկրտչյանը։ Նա ոչ միայն ինքը տիրապետեց աշխատանքի ստախանովյան մեթոդին, այլև սովորեցրեց այդ մեթոդը բանվորների մի մեծ խմբի, որոնք նույնպես հետագայում դարձան ստախանովականներ։

Աշխատանքի ստախանովյան մեթոդները լայն կիրառում և տարածում գտան ռեսպուբլիկայի համարյա բոլոր ձեռնարկություններում և կառուցումներում։

1937 թվականի վերջերին վերջնականապես ջախջախվեցին ռեսպուբլիկայի պարտիական, սովետական և տնտեսական ղեկավար օրգանները ողողսկված տրոցկիստական-նացիոնալիստական ճիվաղները, որոնք վնասում էին սոցիալիստական շինարարության գործին։

Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1937 թվականի սեպտեմբերյան պլենումը ընտրեց պարտիական նոր ղեկավարություն, որը մոբիլիզացրեց պարտիական կազմակերպություններին և ռեսպուբլիկայի ողջ աշխատավորներին՝ վնասարարության հետևանքները լիկվիդացնելու գործում։ Հենց այդ շրջանից է, որ Հայաստանի սոցիալիստական արդյունաբերությունը, ինչպես և ողջ ժողովրդական տնտեսությունը, սկսում է զարգանալ ամենաբուռն թափով։

Ստախանովյան շարժումն առանձնապես լայն չափերով տարածվեց Հայաստանում 1937 թվի վերջերից, տրոցկիստական-նացիոնալիստական վնասարարների մերկացումից ու ջախջախումից հետո, որոնք ամեն կերպ արգելակում էին ստախանովյան շարժման տարածումը։ Այդ ժամանակ ղեկավար աշխատանքի առաջ քաշվեցին առաջավոր բանվորները, երիտասարդ մասնագետները, որոնք մինչև վերջ նվիրված էին Լենինի-Ստալինի մեծ պարտիային և անշեղորեն կատարում էին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ։

Ստախանովյան շարժման տարածումը վճռական շրջադարձ առաջացրեց ռեսպուբլիկայի համարյա բոլոր ձեռնարկությունների աշխատանքի մեջ; հնարավորություն տվեց նրանց՝ դուրս գալ երկարատև ճեղքվածքից և սիստեմատիկաբար կատարել իրենց արտադրական ծրագիրը։

1939 թվի սկզբներին Ուրալի մեքենաշինական գործարանի և Խերսոնի դազգահաշինական գործարանի ստախանովականների նախաձեռնությամբ ծնունդ առավ բազմադազգահականներ շարժումը, որի առաջին նախաձեռնողը հանդիսացավ ընկ. Գուդովը։

Հայաստանում բազմադազգահականներ փորձի առաջին կիրառողներից մեկը հանդիսացավ Երևանի Կիրովի անվան գործարանի մեխանիկական ցեխի ֆրեզերող ընկ. Սմբատ Այվազյանը։ Դազգահների վրա հատուկ սարքավորանք ստեղծելու միջոցով, նա միաժամանակ աշխատում էր երեք ռանդահաստոցի և մեկ ֆրեզերող դազգահի վրա, կատարելով իր նորման 400 տոկոսով։ Շուտով ընկ. Այվազյանի փորձը դարձավ ոչ միայն Կիրովի անվան գործարանի, այլև ռեսպուբլիկայի այլ ձեռնարկությունների ստախանովականների սեփականությունը։

Ստախանովյան շարժման հաջող ծավալումը զգալիորեն արագացրեց ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման տեմպերը։

Պարտիան և Միութենական կառավարությունը խոշոր միջոցներ էին տրամադրում Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը ապահովելու համար։

Ստալինյան հնգամյակների տարիներին Հայաստանի արդյունաբերության մեջ ներդրվել է 631.5 միլիոն ռուբլի (առանց էներգետիկ տնտեսության մեջ ներդրված գումարների), ընդ որում տարեց տարի աճում էր կապիտալ ներդրումների գումարը։ Այսպես, օրինակ, առաջին հնգամյակի տարիներին ներդրվել է 80.4 միլիոն ռուբլի, երկրորդ հնգամյակի տարիներին՝ 233.6 միլիոն ռուբլի, իսկ երրորդ հնգամյակի երեք տարիների ընթացքում՝ 317.5 միլիոն ռուբլի։[1]

Խոշոր կապիտալ ներդրումները և արդյունաբերության զարգացման արագ տեմպը ապահովեցին նրա հիմնական ֆոնդերի ավելացումը։ Ռեսպուբլիկայի արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերը աճել են հետևյալ ձևով. առաջին հնգամյակում նրանք աճեցին 3 անգամ, երկրորդ հնգամյակում՝ ավելի քան 7 անգամ, իսկ երրորդ հնգամյակի երեք տարիների ընթացքում կրկնապատկվեցին։ Իսկ ինչ վերաբերում է խոշոր արդյունաբերությանը, ապա նրա հիմնական արտադրական ֆոնդերը նախապատերազմյան ստալինյան հնգամյակների 13 տարիների ընթացքում աճեցին ավելի քան 32 անգամով։

Հիմնական արտադրական ֆոնդերի աճը ավելի ցայտուն կերպով է Երևան արդյունաբերության առանձին ճյուղերում։ Քիմիական արդյունաբերության գծով ստալինյան հնգամյակների 13 տարվա ընթացքում հիմնական արտադրական ֆոնդերը աճել են 722 անգամ, մետաղամշակման և մեքենաշինական արդյունաբերության գծով՝ 163 անգամ, էներգետիկ արդյունաբերության գծով՝ 40 անգամ, տեքստիլ արդյունաբերության գծով՝ 18 անգամ։

Արտադրական ուժերի սոցիալիստական տեղադրման բաղաքականության իրագործման հիման վրա նախապատերազմյան ստալինյան հնգամյակների տարիներին վերջնականապես որոշվեցին Հայաստանի արդյունաբերության շրջանները և նրանց զարգացման ուղղությունը։

---

[1] „Социалистическое строительство Армянской ССР" (1920–1940 гг.) стр. 19. Статистический сборник.

Ռեսպուբլիկայում ստեղծվեցին հինգ հիմնական արդյունաբերական շրջաններ։

Դրանց մեջ առաջին տեղը գրավում է Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը, որն արտադրում է ռեսպուբլիկայի ամբողջ արդյունաբերական արտադրանքի կեսը։ Այստեղ ստեղծվել են քիմիական, սննդի և համի, մետաղամշակման և թեթև արդյունաբերության խոշորագույն ձեռնարկություններ։ Հետագա տարիներին Երևանը դարձավ նաև Հայաստանի մեքենաշինական արդյունաբերության խոշորագույն կենտրոնը։

Երկրորդ տեղը գրավեց Լենինական քաղաքը, իր բուռն թափով աճող տեքստիլ և տրիկոտաժ արդյունաբերությամբ։

Ռեսպուբլիկայի հյուսիսում՝ Կիրովական քաղաքի շրջանում ստեղծվեց Հայաստանի քիմիական արդյունաբերության խոշորագույն կենտրոններից մեկը։

Ալավերդի քաղաքը և նրա մերձակա շրջանները վաղուց հայտնի են որպես ռեսպուբլիկայի պղնձարդյունաբերության կենտրոն։ Պղնձարդյունաբերության արմատական վերակառուցումից հետո, այս շրջանը շարունակում է իր հետագա զարգացումը՝ ըստ որում պղնձարդյունաբերության հետ միասին այստեղ սկսեց զարգանալ նաև քիմիական արդյունաբերությունը։

Հայաստանի հինգերորդ արդյունաբերական շրջանը հանդիսանում է Ղափանը, որը գտնվում է ռեսպուբլիկայի հարավում։

Հայրենական պատերազմի նախօրյակին հարուստ հանքավայրերի հայտնաբերմամբ որոշակիորեն նախագծվեց Հայաստանի պղնձարդյունաբերության այդ հին շրջաններից մեկի բուռն զարգացումը։

Հայաստանի արդյունաբերության և ամբողջ էկոնոմիկայի զարգացումը տեղի է ունենում Անդրկովկասի և ողջ Սովետական Միության էկոնոմիկայի հետ սերտորեն կապակցված, հաշվի առնելով փոխադարձ կապերի հետագա զարգացումն ինչպես արդյունաբերական առանձին ճյուղերի, այնպես և ռեսպուբլիկայի ամբողջ ժողովրդական տնտեսության հետ։

Բնական է՝ որքան ավելի է զարգանում Հայաստանի արդյունաբերությունը, այնքան ավելի սերտ են դառնում նրա տնտեսական կապերը Սովետական Միության այլ մարզերի և միութենական ռեսպուբլիկաների հետ, այնքան ավելի բարդ է դառնում նրա արդյունաբերության, ինչպես ներճյուղային, նույնպես և միջճյուղային կոոպերացումը։ Դրա հետ միասին աստիճանաբար աճում է Հայաստանի արդյունաբերության տեսակարար կշիռը Սովետական Միության արդյունաբերական արտադրության ընդհանուր բալանսում, առանձնապես նրա այնպիսի ճյուղերինը, ինչպես քիմիականը, մետալուրգիականը, սննդինը և թեթև արդյունաբերությանը։

Այդ չափագանց հետաքրքիր հարցը հատուկ ուսումնասիրության նյութ է հանդիսանում և չի կարող իր մանրամասն լուսաբանումը գտնել տվյալ հոդվածում։

Հայաստանի ինդուստրիալ զարգացմանը զուգընթաց տեղի էր ունենում բանվորների և ծառայողների թվի խիստ ավելացում՝ ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ և առանձնապես արդյունաբերության մեջ։ Բանվորների և ծառայողների թիվը արդյունաբերության մեջ ստալինյան հնգամյակների տարիներին ավելացավ 3,5 անգամ, իսկ աշխատավարձի ֆոնդը՝ 20 անգամ։ Հայաստանի տասնյակ հազարավոր բանվորներ տիրապետել են բարդ պրո-

ֆեսիաների և դարձել արտադրության բարձրորակ վարպետներ։ Անհամեմատելիորեն բարձրացել է ռեսպուբլիկայի բանվոր դասակարգի կուլտուր-կենցաղային մակարդակը, որն ապահովում է ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև եղած հակասության աստիճանական վերացումը։

Հայ ժողովուրդը սոցիալիստական հասարակակարգի համար մղած իր պայքարում, Լենինի-Ստալինի պարտիայի ղեկավարությամբ, ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում, շնորհիվ իր ավագ եղբայր, ռուս մեծ ժողովրդի մշտական օժանդակության, ձեռք բերեց պատմական մեծ հաղթանակներ։

Սովետական Հայաստանը ստալինյան հնգամյակների տարիներին հետամնաց ագրարային երկրից դարձավ առաջավոր ինդուստրիալ ռեսպուբլիկա։

Սոցիալիստական հասարակակարգի հաղթանակի համար մղված պայքարում հայ ժողովրդի ձեռք բերած նշանակալից հաջողությունները հանդիսանում են բոլշևիկյան պարտիայի և Սովետական կառավարության վարած լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության փայլուն հաղթանակը։

Որքան ավելի էր զարգանում Հայաստանի սոցիալիստական արդյունաբերությունը, այնքան ավելի նոր ու նոր հեռանկարներ էին բացվում նրա հետագա ծաղկման համար, նա այնքան ավելի վերափոխիչ ազդեցություն էր ունենում ռեսպուբլիկայի ամբողջ տնտեսության վրա, այնքան ավելի սերտ էր դառնում նրա փոխադարձ կապը Սովետական Միության էկոնոմիկայի հետ։

Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացման արագ տեմպերը մեր երկրի ինդուստրացման քաղաքականության, ՍՍՌՄ-ում արտադրողական ուժերի նոր, սոցիալիստական տեղադրման և բոլոր ազգային ռեսպուբլիկաներում արդյունաբերական օջախներ ստեղծելու քաղաքականության նշանակալից պտուղներն են։

Բոլշևիկյան պարտիայի և Սովետական կառավարության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը, մեր երկրի ժողովուրդների միջև եղած տնտեսական ու կուլտուրական անհավասարության լիկվիդացման ու նրանց միջև ստալինյան բարեկամության ամրացման քաղաքականությունը փայլուն հաղթանակ ձեռք բերեց։